## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

23 դեկտեմբերի 2021թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Զաքարյանը:

Նիստին մասնակցում էին Նաիրի համայնքի ավագանու թվով 17 (տասնյոթ) անդամներ՝

Գևորգ Մուրադյանը, Արմեն Համբարձումյանը, Մարգարիտա Պետրոսյանը, Նորայր Սարգսյանը, Կարեն Հարությունյանը, Անահիտ Ստեփանյանը, Աշոտ Ազիզյանը, Արման Աբրահամյանը, Վարդուհի Բարսեղյանը, Խաչիկ Իսրայելյանը, Գոռ Հայրապետյանը, Լիլիանա Հարությունյանը, Անդրանիկ Մկրտչյանը, Խոսրով Ստեփանյանը, Աննման Բաբայանը, Ռաֆիկ Զոհրաբյանը և Արտաշես Ղարիբյանը:

Նիստին չէին ներկայացել ավագանու թվով 10 (տասը) անդամներ՝

Արմեն Խաչատրյանը, Վարդան Ասատրյանը, Սոֆիկ Սիմոնյանը, Վաղարշակ Ամիրխանյանը, Անահիտ Հակոբյանը, Անահիտ Առաքելյանը, Լենդրուշ Արշակյանը, Պետրոս Ստեփանյանը, Քրիստինե Մանուկյանը և Արթուր Մուրադյանը:

Նիստին ներկա էին նաև ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻՄ և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Հարություն Ալեքսանյանը, Եղվարդի Սուրբ Սարգիս եկեղեցու քահանա Տեր Հովսեփ Ալեքսանյանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենները և համայնքի բնակիչներ:

Նիստն իրավազոր էր, քանի որ նիստին ներկա էին ավագանու օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Նիստը վարում էր նիստին ներկա՝ տարիքով ավագ անդամ Նորայր Սարգսյանը:

Նորայր Սարգսյանը ներկայացրեց Նաիրի համայնքի ավագանու նիստի օրակարգի միակ հարցը.

***Համայնքի ղեկավարի երդում.***

Համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը ընթերցեց երդման տեքստը.

<<Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:»:

Համայնքի ղեկավարը ստորագրեց երդման տեքստը և ի պահ հանձնեց համայնքապետարանի աշխատակազմին:

Այնուհետև ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Եղվարդի Սուրբ Սարգիս եկեղեցու քահանա Տեր Հովսեփ Ալեքսանյանը, որից հետո համայնքի ղեկավարը ավագանու նիստը հայտարարեց փակված:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐ**

**Գևորգ Մուրադյան** _______________

**Արմեն Հանբարձումյան** _______________

**Մարգարիտա Պետրոսյան** _______________

**Նորայր Սարգսյան** _______________

**Կարեն Հարությունյան** _______________

**Անահիտ Ստեփանյան** _______________

**Աշոտ Աղիզյան** _______________

**Արման Աբրահամյան** _______________

**Վարդուհի Բարսեղյան** _______________

Խաչիկ Իսրայելյան ______________

Գոռ Հայրապետյան ______________

Լիլիանա Հարությունյան ______________

Անդրանիկ Մկրտչյան ______________

Խոսրով Ստեփանյան ______________

Աննման Բաբայան ______________

Ռաֆիկ Ձոհրաբյան ______________

Արտաշես Ղարիբյան ______________

*Նիստը վարեց՝ Նորայր Սարգսյանը* ______________

*Արձանագրեց՝ Համիկ Զաքարյանը* ______________

# Ե Ր Դ ՈՒ Մ

<<Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:»:

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ